

ՄԱՐԴՈՒ ՎԱՐՔԸ ԷՔՍՏՐԵՄԱԼ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ

(ըստ Սպիտակի 1988 թ. երկրաշարժի հետազոտությունների նյութերի)

Ա. Կ. ԲԱՐԱՅԱՆ

Մարդկության պատմության մեջ բնական տարերային աղետները միշտ էլ առկա են եղել: Դրանք հիմնականում բնութագրվել են. 1. աննախադեպությամբ, 2. զոհերի քանակով, 3. հասցրած վնասներով: Հաստատված է. որքան լավ է նախապատրաստված հասարակությունը հակազդելու բնական տարերքներին, այնքան քիչ են մարդկային զոհերի քանակը և հասցված վնասները:

Ֆրանսիայում հրատարակվող ամենամյա «Քիդ» հանրագիտարանում նշված է, որ Հայաստանի 7 բաղ ուժգնությամբ երկրաշարժը (7. 12. 1988) տարավ 75000 մարդկային զոհ¹: Ինչպես ժամանակին նշել են արտասահմանյան մասնագետները², նույն ուժգնությամբ երկրաշարժը, ինչպիսին Սպիտակին էր, առավել նվազ զոհեր կտար: Այսպես, օրինակ, Իտալիայում կամ Լոս Անջելեսում՝ մոտավորապես 1000 զոհ: Սպիտակի երկրաշարժը իսկապես որ առանձնահատուկ էր ավերածություններով ու մարդկային զոհերի քանակով: Պատճառներից մեկը վատ նախապատրաստվելն էր, ավելի ճիշտ՝ նախապատրաստված չլինելը: Իսկ նախապատրաստված լինելու համար տվյալ երկրի, տարածքի յուրաքանչյուր քաղաքացի պետք է՝

1. բավականաչափ տեղեկություններ և գիտելիքներ ունենա հնարավոր բնական աղետի մասին,

2. աղետին նախորդող ու հաջորդող վարվելաձևի վերաբերյալ,

3. վարվելակերպի տարրական կանոնների մասին, որը կնվազեցնի մարդկային զոհերի քանակը,

4. հոգեբանորեն նախապատրաստված լինի աննախադեպ, անակնկալ աղետին՝ զնահատելու համար պահի առանձնահատկությունները,

5. նախապատրաստված լինի տեխնիկապես. տեղյակ լինի առաջին օգնության միջոցառումներին:

Հոգեբանորեն և տեխնիկապես նախապատրաստված լինելուն նպաստում են.

1. տվյալ տարածքում գործող արագ հակազդող վթարավերականգնողական, փրկարար ջոկատների և այլ ծառայությունների արդյունավետ գործունեությունը, այն բոլոր սոցիալ-քաղաքական երաշխիքները, որոնք կիրառվում են աննախադեպ իրավիճակների դեպքում,

2. սոցիալական պաշտպանվածության մեխանիզմների հուսալիությունը: Յավոք, աղետների մասին տեղեկությունները տրվում են աղետից հետո: Հազարամյակների ընթացքում երկրաշարժերը և դրանց կանխագուշակումները խճողված են եղել բազմաթիվ լեգենդներով ու առասպելներով: Մարդիկ միշտ էլ վախեցել են երկրաշարժերից և դրանց վթխարի ավերիչ ուժը բացատրել են գերբնական, անիմանալի ուժերով: Մինչդեռ, մարդկանց

¹ A. Baum, Toksins, technology and natural disasters (Cataclisms crisis and catastrophes, Washington, 1987. p. 9-46).

² Qulde, Paris, 1990, p. 101.

³ Nouvel observateur, 9. XII. 1988 [Centre d'Etudes de documentations et d'Informations Armeniennes (ՀԱՅԱՍՏԱՆԻՑԵԴԻԱ), 1988-1989].

անհրաժեշտ տեղեկություններին անտեղյակ լինելը հասցնում է անցանկալի հոգեկան շեղումների: Հայաստանի երկրաշարժի անսպասելիությունը հիմնականում պայմանավորված էր բնակչության անտեղյակությամբ: Ինչպես հաստատում են ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի սոցիոլոգիական խմբի հետազոտության արդյունքները*, հարցվողների 87,2 %-ը չէր սպասում, որ երկրաշարժ կլինի: Դեռ ավելին. 46,6 %-ը համարում է, որ դա բնական աղետ չէր: Ժամանակի ընթացքում մոռացության են մատնվել անցյալի փորձությունները: Արհավիրքին նախապատրաստվել նշանակում է նաև տարիներ ընթացքում ապրած փորձությունները դարձնել կենսափորձ: Այդ կենսափորձը պետք է հարատևեր, որովհետև պատմական Հայաստանի, ինչպես նաև ներկայիս Հայաստանի տարածքը հայտնի է սեյսմիկ առումով փոր վտանգավորությամբ⁴: Կարելի է հիշատակել Մծբինի (I դ.), Մոզի (Վայոց Ձոր, VIII դ.), Դվինի՝ երկու (893—894 թթ.), Գառնիի (1679 թ.), Ծաղկաձորի (1827 թ.), Արարատի (1840 թ.), Զանգեզուրի (1931 թ.), Լենինականի (1926 թ.) երկրաշարժերը, որոնք բազմաքանակ մարդկային զոհեր տալով հանդերձ, չդարձան կենսափորձ⁵:

Բազմիցս նշվել է երկրաշարժերից առաջ կենդանիների ոչ սովորական վարքի մասին: Ակնհայտ է, որ աղետից առաջ կենդանիների վարքում փոփոխություններ են նկատվում, որոնք պայմանավորված են հիմնականում ֆիզիոլոգիական գործոններով, օրգանիզմում ոչ պայմանական պաշտպանողական ռեֆլեքսների առաջացմամբ, որոնք ի հայտ են գալիս երկրաշարժի էպիկենտրոնի՝ որպես զրգուխի, առկայությամբ: Ստացված տեղեկությունների համաձայն Սպիտակի երկրաշարժի սկսվելուց առաջ փոփոխություններ են նկատվել հետևյալ կենդանիների վարքագծում. ընտանի կենդանիներ՝ 57,13 %, կրծողներ՝ 11,14 %, ընտանի թռչուններ՝ 5,3 %, վանդակի թռչուններ՝ 4,24 %⁶, որոնց վարքն անուշադրության է մատնվել:

Պետք է ասել, որ Սպիտակի երկրաշարժի անսպասելիությունը ոչ միայն տեղեկատվության պակասն է կամ սխալ տեղեկությունները, այլև սեյսմիկ առումով անբավարար գիտելիքները: Սա ևս ավելորդ անգամ ընդգծում է, այն փաստը, որ բնական աղետին նախապատրաստված չլինելը հանգեցնում է մարդու գործունեության, ինքնակառավարման խիստ նվազեցմանը՝ իր համար նոր, էքստրեմալ իրավիճակում: Աղետի գոտում հարցվողների 76 %-ը չգիտեր ինչպես վարվել երկրաշարժի դեպքում:

Ամերիկացի գիտնականները, ուսումնասիրելով մարդու վարքը էքստրեմալ պայմաններում (ջրհեղեղ, երկրաշարժ, փոթորիկ, հրդեհ և այլն), այն եզրակացությունն են հանգել, որ մարդկանց 15 %-ն է գործում կազմակերպված ու մտածված: 70 %-ը գործում է անկազմակերպ, սակայն նրանց վարքը կարելի է այս կամ այն ձևով համարել արդյունավետ, իսկ մնացած 15 %-ի գործողություններն անկառավարելի են, և մարդիկ մեծ օգնության կարիք ունեն⁷:

Տեղեկատվության պակասը, անբավարար գիտելիքները և հատկապես հոգեբանորեն նախապատրաստված չլինելը էքստրեմալ իրավիճակին, տվյալ դեպքում՝ երկրաշարժին, երբ անխուսափելի են մարդկային կորուստները, ծնում է նաև հոգեկան անցանկալի երևույթներ, շեղումներ, որոնք բուժելը շատ ավելի դժվար է, քան անձին նախապատրաստելը: Հարավսլավիայի Սկոպլե քաղաքի 1963 թ. երկրաշարժը 20 վայրկյանում ավերեց քաղաքը:

* Հեղինակը մասնակցել է նյութերի հավաքման և մշակման աշխատանքներին:

⁴ Այս մասին տե՛ս Բ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984, էջ 6—8:

⁵ Նույն տեղում,

⁶ Промышленность Армении, 1990, № 2, с. 13.

⁷ Camille B. Wortman, Coping with Irrevocable loss (cataclisms crisis and catastrophes. p. 185—223).

ԼՊՊԻՐ 1—6

Երկրաշարժից հետո կատարված հետազոտությունները պարզեցին, որ բնակչության 10 %-ը բժշկական-հոգեբույժների կարիք ունի⁸։ ԱՄՆ-ի 1953 թ. փոթորկից հետո 15000 հոսպիտալացված մարդկանցից 900-ը ստացել էին հոգեկան տարբեր խեղումներ, ոմանք կորցրել էին հիշողությունը, ոմանք՝ խոսելու ընդունակությունը⁹։ Իսկ Աշխաբադի (1948) և Տաշքենդի (1966) երկրաշարժերի ժամանակ, որոնք մի քանի տասնյակ հազար զոհեր խլեցին, բնակչության 10 %-ն էր միայն կարողացել դուրս դալ հոգեկան ցնցումներից և ակտիվ մասնակցություն ունեցել փրկարարական ջոկատների աշխատանքներին։ Դրանք հիմնականում տարեց մարդիկ էին՝ պատերազմի մասնակիցները, որոնք ունեին որոշ փորձ¹⁰։ Փորձը ևս թույլ է տալիս ճիշտ գնահատել պահի կարևորությունը և խուճապի շատանմանը։

Սպիտակի երկրաշարժից հետո, ըստ սոցիոլոգիական հետազոտության անդամների, խուճապի է մատնվել հարցվողների 23,7 %-ը, ինքնատիրապետումը կորցրել է և ոչինչ չի ձեռնարկել 13 %-ը, ինչպես նաև են արտասահմանյան հոգեբույժները, բնակչության 90 %-ին անհրաժեշտ են հոգեբանական վերականգնողական կոնսուլտացիաներ¹¹։ Հայտնի է, որ մարդուն ևս ներհատուկ են ոչ պայմանական մի շարք ռեֆլեքսներ, որոնք ի հայտ են գալիս անգիտակցորեն, որևէ սպառնալիքի դեպքում։ Այս պարագայում հիմնական գործոն է դառնում հույզերի կառավարումը, որն օգնում է գնահատելու պահի կարևորությունը և վտանգը, ճիշտ և արագ որոշելու հետագա գործողությունների ընթացքը¹²։ Հույզերի ոչ ճիշտ կառավարումը հանգեցնում է քաոսային վիճակի, որը պայմանավորված է առաջին հերթին՝ տեղեկությունների պակասով և էքստրեմալ պայմաններում առաջին միջոցառումների տեղյակ չլինելու հանգամանքով։ Հետևաբար, հնարավոր են դառնում ոչ միայն առանձին հոգեկան ֆունկցիաների շեղումներ, ինչպիսիք են՝ ընկալման արգելակում, հիշողության կորուստ, շարժումների և գործունեության կաթվածահարություն, պահի գնահատման և խնդրի լուծման անկարողություն, Գործունեության պահպանման նախապայման է համարվում նաև մարդու գիտակցված նպատակաուղղվածությունը՝ հաղթահարելու կամ վերացնելու էքստրեմալ գործոնի ազդեցությունը։ Նպատակաուղղված գործունեության հիմքում ընկած է հոգեբանական նախապատրաստվածությունը, երբ մարդն ունենալով նախնական գործունեության պատկերացում, ելնելով էքստրեմալ պայմանների որակական, երբեմն էլ քանակական վերլուծություններից, ավելի ճկուն վարք է դրսևորում։ Ըստ Սպիտակի երկրաշարժի հետազոտությունների արդյունքների, էքստրեմալ պայմաններում կարելի է տարբերակել վարքի երկու հիմնական հակադրեցություններ. 1. էքստրեմալ իրավիճակի համարժեք հակադրեցություն, 2. տագնապի, խուճապի հակադրեցություն։

Անդրադառնանք հակադրեցության երկրորդ ձևին, քանի որ հարցվողների 57,8 %-ին հատուկ է եղել այդպիսին։ Պետք է ասել, որ տագնապի, խուճապի հակադրեցությունը հենց ճշգրիտ կաթվածահարությունն է, կամային գործունեության խանգարումը, որը մասնագիտական գրականության մեջ նշվում է որպես «ստոպորային հակադրեցություն»¹³։ Դա ավելի հատուկ էր նախնադարյան մարդուն, այսինքն՝ պաշտպանական պարզ մեխանիզմ ունեցող արարածին։

⁸ Н. И. Дьяченко, Л. Н. Кандыбович. Психологические проблемы готовности, Минск, 1976, с. 130.

⁹ Նույն տեղում։

¹⁰ Նույն տեղում։

¹¹ Meridional, 1989, janvier (EDIA).

¹² В. М. Бехтерев, Коллективная рефлексология, Петроград, 1921.

¹³ В. И. Лебедев, Личность в экстремальных условиях, М., 1989, с. 244

Ճիշտ է, վախը բոլոր դեպքերում բացասական հույզեր է առաջացնում, սակայն կարելի է ժամանակի ընթացքում գիտակցության, փորձի, հմտության միջոցով հաղթահարել կամ մեղմացնել վախը:

Հետազոտության արդյունքները հաստատեցին, որ հույզերի ուժը հակառակ համեմատական է մարդու ինտելեկտուալ մակարդակին: Ըստ կրթության, թերի միջնակարգ՝ շատ վախեցել է 31,2 %-ը, միջնակարգ՝ 23,3 %-ը, միջնակարգ մասնագիտական՝ 23 %-ը, թերի բարձրագույն և բարձրագույն՝ 19 %-ը: Տարիքը մեծանալու հետ ամեկտեղ, փորձ, հմտություն. ձեռք բերելով, նվազում է նաև հույզերի, տվյալ դեպքում վախի ուժի ազդեցությունը: Այսպես, 21—30, 31—40 տարիքային խմբերից շատ վախեցել է համեմատաբար 32,3 %-ը, 25,4 %-ը, իսկ 51—60 տարիքային խմբից՝ 11,7 %-ը: Հասուն, գիտակից մարդու մեջ անիմաստ վախ չի առաջանում, քանի դեռ նա պաշտպանված է, այսպես ասած, սոցիալական, մշակութային և պաշտպանական այլ մեխանիզմներով: Այս դեպքում հնարավոր է դառնում էքստրեմալ իրավիճակում նրա վարքը կանխագուշակելն ու ղեկավարելը, որը պայմանավորված է նաև երկարատև նախապատրաստման, մարզումների, փորձի, հմտությունների ձեռքբերման (այդ թվում նաև հասարակության փորձով) և այլ միջոցառումներով:

Խուճապի հակազդեցությունը դրսևորվում է երկու ձևով՝ պասսիվ և ակտիվ: Քանի որ նշվեց, թե վարքի այս ձևն արտահայտվում է ոչ պայմանական ռեֆլեքսների առկայությամբ և հիմնականում անգիտակից, ուստի և պասսիվ, և ակտիվ դրսևորումները փնտթագրվում են առաջին հերթին վարքի ինքնատիրապետման, ինքնաղեկավարման ժամանակավոր կորստով: Պասսիվ ձևը բնութագրվում է հետևյալ կերպ. արգելակվում են շարժումները, մարդիկ կորցնում են բանականությունը, դառնում ավելի թույլ և դանդաղկոտ: Այսպիսի դրսևորմանը նպաստում են նաև էքստրեմալ իրավիճակում գործունեության, վարվելակերպի առաջին միջոցառումների պակասը, չիմացությունը: Այս խմբում չի բացահայտվում նաև թույլ անհատական հատկություններով օժտված մարդկանց առկայությունը: Այսպես, հարցման ժամանակ հաճախ հարցվողը երևելիք ներկայացնում էր ինքնամոռացության մեջ գտնվածի ընկալումով: Մեծ մասամբ խոսքը սկսում էին հետևյալ կերպ. «Չգիտեմ՝ ես եմ, թե ես չեմ», «Մեկ էլ հանկարծ գետինը ոտքերիս տակից փախավ», «Ունց որ թե...», «Չգիտեմ, ինչ մտածեմ»: Սրանց գործողությունները կատարվում են բնազդաբար, չգիտակցված, մի մասը շինությունից դուրս է փախչում, մի մասը ներսում է ապաստան որոնում:

Հարցվողների 76 %-ը չգիտեր ինչպես վարվել երկրաշարժի ժամանակ: Առաջին ցնցումներից հետո հարցվողների 45,4 %-ը մյուսների հետ դուրս է եկել շենքից, 12,5 %-ը մնացել է շենքում, հարմար տեղ է գտել մինչև ցնցումի ավարտը: 21,4 %-ը վազել է իր տան կողմը, 11 %-ն՝ այլ ուղղությամբ:

Ակտիվ ձևը ըստ էության հակառակ պատկերն է տալիս. արտաքին գործոնները (տեխնիկայի պակասը, էքստրեմալ իրավիճակում կառավարման տեխնոլոգիայի, փրկարար ջոկատների բացակայությունը, արագ-արձագանքող ժառանգությունների դանդաղկոտությունը, սոցիալ-քաղաքական երաշխիքների պակասը, սոցիալական պաշտպանվածության մեխանիզմների անգործությունը) ազդում են վարքի վրա: Այսինքն, երբ մարդը մենակ և անզոր է զգում հաղթահարելու արհամիրքը: Սպիտակի երկրաշարժի ժամանակ մասնագիտացված ժառանգությունների նախապատրաստված շինելը ևս նպաստեց քառասյին իրավիճակին, որի հետևանքով տասնյակ հազարավոր մարդկային կորուստներ, հոգեկան ծանր ցնցումներ եղան:

Ըստ էության, վարքի հակազդեցության այս ձևերը անցանկալի են, սակայն ակտիվ ձևի դրսևորման մեջ կա բանական մի հատիկ, որը հիշատակելու կարժեք ունի: Դրանք ընդօրինակման, նմանակման ձևերն են: Այսինքն, երբ մարդ կորուրեն նմանակում է մեծամասնությանը կամ որևէ հմուտ խմբի:

Այս առումով, ինչպես հիշատակում են արտասահմանյան փրկարարները, մեծ օգնություն է ցույց տվել բնակչությունը՝ համագործակցելով փորձառու փրկարարների հետ: Նույն փաստը հաստատում են հետազոտության արդյունքները: Այն հարցին, թե ով է ստանձնել աղետից անմիջապես հետո օգնություն կազմակերպելու խնդիրը, հարցվողների 53,6 % -ը պատասխանել է՝ մարդիկ իրենք են փորձել կազմակերպել, 36,3 % -ը ավելի արդյունավետ է համարել դրանց եկած փրկարար ջոկատների աջակցությանը: Անհրաժեշտ է ժամանակի ընթացքում հղկել վարքի դրսևորման այս ձևը: Ունենալով բավականաչափ փորձ, ձեռք բերելով հմտություն՝ մարդն ակամա ի հայտ է բերում վարքի համապատասխան դրսևորում, որը և հենց համարվում է նպատակալաց, նպատակառոտ դրսևորում գործունեություն: Ունենալով որոշակի գործունեության պլան, մարդը կարող է նվազեցնել, վերացնել էքստրեմալ իրավիճակի քաոսը:

էքստրեմալ իրավիճակում վարքի համապատասխան դրսևորումը ներառում է բոլոր այն նախապատրաստությունները, որոնք արդեն նշվել են, այն է՝ գնահատելու պահի կարևորությունը, հոգեբանորեն և տեխնիկապես պատրաստվելը աննախադեպ, սակայն անխուսափելի իրավիճակներին: Քանի որ էքստրեմալ իրավիճակը վարքի կազմալուծում է առաջացնում, ուստի այդ պայմաններում գործունեության հաջողությունը կախված է այդ իրավիճակին պատրաստ լինելուց¹⁴, որին նպաստում են փորձը և գիտելիքները: Դրանց արագ, ճիշտ կիրառումը պահպանում է ինքնադիմավարումը, ինչպես նաև գործունեության ընթացքում հաղորդում է դրական հույզեր:

Այսպիսով, էքստրեմալ պայմաններում ներկայացված վարքի հակազդեցությունները ցույց են տալիս՝ 1. վարքի անկազմակերպվածությանը կամ կազմալուծմանը խիստ նպաստում են տեղեկատվության պակասը, անորոշությունը, գիտելիքների անբավարարությունը: 2. էքստրեմալ իրավիճակում խախտվում են ոչ միայն անձնային հոգեկան ֆունկցիաները, այլև ինքնակառավարումը, պահի գնահատման անկարողությունը և խնդրի ճիշտ լուծումը: 3. Ամենակարևոր նախապայմանը էքստրեմալ պայմաններում գործունեության կայունացումն է, որն է՝ փորձի, հմտության, իմացության օգտագործումը և ամբողջությամբ վերցրած՝ հոգեբանական նախապատրաստվածությունը:

Վարքի երկրորդ ձևը՝ տագնապի և խուճապի հակազդեցությունը, բացասական է, անցանկալի ու կազմալուծող թե՛ անհատի և թե՛ հասարակության համար, որի հիմնական պատճառը անպատրաստ լինելն է և աղետի դեպքում օպտիմալ գործունեության անտեղյակությունը: Առաջին ձևը՝ համարժեք հակազդեցությունը, անկասկած, էքստրեմալ պայմաններում նպատակալաց գործունեության կանխորոշող նախապայմանն է: Այն գործունեության մի համալիր է, որը ներառում է և՛ իրավիճակի գնահատումը, և՛ խնդրի լուծումը: Վերջինիս հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել ու զարգացնել համապատասխան սոցիալ-տնտեսական և հոգեբանական նախապայմաններ՝ համապետական համակառուցվածքների՝ աղետի դեպքում արագ արձագանքող ծառայությունների ստեղծումը, բնակչությանը (առանձնապես դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում) հատուկ մարզումների միջոցով ճիշտ ու արագ հակազդելուն նախապատրաստելը:

¹⁴ М. И. Дьяченко, Л. А. Кандыбович, В. А. Пономоренко, Готовность к деятельности в напряженных ситуациях (Психологический аспект, Минск, 1985, с. 81—114).

ПОВЕДЕНИЕ ЧЕЛОВЕКА В ЭКСТРЕМАЛЬНЫХ УСЛОВИЯХ (на материале исследований Спитакского землетрясения 1988 г.)

А. К. БАБАЯН

Р е з ю м е

Результаты социологических исследований, проведенных после Спитакского землетрясения в зоне бедствия, позволили выявить следующие формы поведения человека в экстремальных условиях: 1. адекватная форма, 2. реакция тревоги и паники. Вторая форма поведения истощающа и деструктивна для индивида и общества. Первая форма является безусловно решающим условием реализации целенаправленной деятельности в экстремальных условиях. Эта форма является комплексным психологическим процессом оценки обстановки и принятия решений. Для ее проявления необходимо создание и развитие соответствующих социально-экономических условий т. е. комплексная подготовка человека и общества в целом к стихийным бедствиям.